Կ-1338-21.04.2026-ՏՀ-011 **Երկրորդ ընթերցում**

Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սննդամթերքի անվտանգության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-135-Ն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 22. 7-րդ և 22. 8-րդ կետերով.

«22. 7) Եվրոպական Միության Առևտրի վերահսկման և փորձագիտական համակարգում գրանցման համար ձկնաբուծական տնտեսություններին կամ ձկնամթերքի արտադրական կազմակերպություններին կամ ձկան կամ ձկնամթերքի պահպանում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող պահանջների հաստատումը.

22.8) Հայաստանի Հանրապետությունից Եվրոպական Միության երկրներ ձկան կամ ձկնամթերքի արտահանման նպատակով Առևտրի վերահսկման և փորձագիտական համակարգում տնտեսավարող սուբյեկտի գրանցման, գրանցումը դադարեցնելու և առողջության սերտիֆիկատ տալու կարգի հաստատումը. »:

Հոդված 2.

1) Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2) Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի պաշտոնական հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում:

Կ-1338-21.04.2026-ՏՀ-011/1~~0~~ **Երկրորդ ընթերցում**

Լրամշակված ~~նախագիծ~~

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սննդամթերքի անվտանգության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-135-Ն օրենքի ~~(այսուհետ՝ Օրենք)~~ 6-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 22. 7-րդ և 22. 8-րդ կետերով.

«22. 7) Եվրոպական Միության Առևտրի վերահսկման և փորձագիտական համակարգում գրանցման համար ձկնաբուծական տնտեսություններին կամ ձկնամթերքի արտադրական կազմակերպություններին կամ ձկան կամ ձկնամթերքի պահպանում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող պահանջների հաստատումը.

«22.8) Հայաստանի Հանրապետությունից Եվրոպական Միության երկրներ ձկան կամ ձկնամթերքի արտահանման նպատակով Առևտրի վերահսկման և փորձագիտական համակարգում տնտեսավարող սուբյեկտի գրանցման, գրանցումը դադարեցնելու և առողջության սերտիֆիկատ տալու կարգի հաստատումը.»:

Հոդված 2. ~~Եզրափակիչ մաս և անցումային դրույթ~~

1) Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2) Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի պաշտոնական հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-1338-21.04.2026-ՏՀ-011/1) ԵՎ «ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-1338[1]- 21. 04. 2026-ՏՀ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկությանն վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1338-21. 04. 2026-ՏՀ-011/1)					
1	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում առաջարկվում է հանել «(այսուհետ՝ «Օրենք»)» ձևակերպումը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծում «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքին այլևս հղում չի կատարվում:	Ընդունվել է:	**Ընդունվել է:**

2	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածի լրացվող 22. 7-րդ կետում առաջարկվում է «կազմակերպություններին կամ» բառերից հետո լրացնել «ձկան կամ» բառերը, քանի որ պահպանում իրականացնող կազմակերպությունը իրկանացնում է ոչ միայն ձկնամթերքի այլ նաև ձկան պահպանում:	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
3	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի վերնագիրն առաջարկվում է հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված պահանջը, այն է. «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի»:	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
«ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1338[1]- 21. 04. 2026-ՏՀ-011/1)					
1	Կառավարություն	2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում նոր լրացվող 14.1-ին հոդվածում «14.1»-ից հետո առաջարկվում է դնել միջակետ՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասում սահմանված պահանջը, այն է. «Հոդվածների եւ մասերի համարները տեքստից բաժանվում են	Ընդունվել է:	Ընդունվել է:

			միջակետերով, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով:		
2	Կառավարություն	2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում նոր լրացվող 14.1-ին հոդվածի 1-ին մասում առաջարկվում է «կազմակերպություններին կամ» բառերից հետո լրացնել «ձկան կամ» բառերը, քանի որ պահպանում իրականացնող կազմակերպությունը իրկանացնում է ոչ միայն ձկնամթերքի այլ նաև ձկան պահպանում: 2-րդ մասում առաջարկում է «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերը փոխարինել «Կառավարության» բառով, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված պահանջները:	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
3	Կառավարություն	2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածում սահմանվում է այսուհետ «համակարգ» բառը, հետևաբար առաջարկվում է 3-րդ և 10-րդ մասում հանել «Եվրոպական Միության առևտրի վերահսկման և փորձագիտական» բառերը:	Ընդունվել է:	**Ընդունվել է:**
4	Կառավարություն	3-րդ հոդված	Նախագծում առկա է վրիպակ՝ առաջարկվում է շտկել հոդվածների համարակալումը:	Ընդունվել է:	**Ընդունվել է:**